սրբատաշ եւ կրաշաղախով շինուածքներ, որոց աւերակները կենդանի վկայ են Օլթիի փառաւոր անցեալին:

Ուղթիքը է· դարում արդէն իւրացրած էին Բագրատունիները, ինչպէս երեւում է պանձազնով, Բիւզանդական երկիրներ փոխադրուած Պարթեւ–Արշակունիներից եւ ուրիշներից: Ուղթիքի մասին յիշատակութիւն չունին Փաւստոսը, Խորենացին, Փարպեցին եւ Եղիշէն· առաջին անգամ Ուղթիքը գործածւում է Ասողիկից, ապա Դրասխանակերտցուց եւ Լաստիվերտցուց, որոնք չատ որոշ Ուղթիք, այլ ո՛չ «Ուխտի» են անուանում ձեռագրերում, ինչպէս յետագայ դարերում, որ եղել է գաւառի ոստանը: Ուղթիքը ոստան է եղել Բագրատունիների համար նոյն իսկ Ը.—ԺԱ· դարերում, երբ նրանք Շիրակից կառավարում էին ամբողջ Հայ աշխարհը եւ Իսլամի Խալիֆի փոխարքաներն էին իրենց վիճակում: Անին, Արշարունիքը՝ Կամսարականներից պանձազնով ձեռք բերելուց, երկրի վարչութիւնը Արգինայից–Երազգաւորս եւ Անի հասատաելուց յետոյ եւս Ուղթին մնում է Բագրատունիների ոստան, ճիշտ այնպէս, ինչպէս Պարթեւները համայն Հայ աշխարհին տիրելիս, իրենց տոհմական Ոստանը Ուղթին պահպանել էին: Ինչպէս երեւում է Օլթին–Domaine է եղել արքայական տան համար ամենավաղ ժամանակներից, ո՛չ միայն